7 մարտի 2018 թ. N 151-Ա

ք. Ստեփանակերտ

«ՀԻԴՐՈՍԵՐՎԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ, 20-րդ հոդվածները, 68-րդ հոդվածի 7-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Վերակազմակերպել «Հիդրոսերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը՝ միացնելով «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված փակ բաժնետիրական ընկերությունների միացման պայմանագրի և փոխանցման ակտի կազմման ու հաստատման աշխատանքների կատարումը, դրան համապատասխան հաստատել «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նոր չափը և «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ.

2) «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության և գույքային իրավունքների ու «Հիդրոսերվիս» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարման պետական գրանցման աշխատանքները՝ «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ